Luys Lnyu®

ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ՓԵՏՐՎԱՐ ԱՄԻՍՆԵՐԻՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ 1
   1.1. Արդյունաբերություն 2
   1.2. Շինարարություն 3
   1.3. Ծառայություններ 4
   1.4. Առևտուր 5
2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ 6
3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ 8
4. ՓՈԽԱՐԺԵՔ 9
5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ 10
   5.1. Բյուջեի եկամուտները 10
   5.2. Բյուջեի ծախսերը 12
   5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը 13
   5.4. Պետական պարտք 13
6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ 14
   6.1. Գնաճ 14
   6.2. Ավանդներ 15
   6.3. Վարկեր 16
   6.4. Դրամական փոխանցումներ 18
7. ԱՄՓՈՓՈՒՄ 19

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

Վերջին տարիներին ՀՀ տնտեսության վրա ազդող արտաքին շոկերի և միանգամյա գործոնների ազդեցության հաճախականությունն էապես մեծացել է: Այդպիսի միանգամյա գործոնների շարքին կարելի է դասել նաև ներկայումս ՀՀ տնտեսական աճը արագացնող հիմնական շարժիչ ուժը՝ ոսկերչական գործունեության կտրուկ աճը, քանի որ վերջինս ևս պայմանավորված է արտաքին գործոններով (օրինակ՝ ՌԴ նկատմամբ կիրառված պատժամիջոցներով և ՌԴ հետ կապված այլ զարգացումներով): Հետևաբար այն կարող է կտրուկ դադարել՝ ՀՀ տնտեսության հետ չկապված երևույթների փոփոխության պատճառով: Սակայն նշված գործոնի առկայության պայմաններում ՀՀ տնտեսական ակտիվության աճն էապես արագացել է՝ փետրվարին հասնելով 16.3%-ի, իսկ հունվար-փետրվար ամիսների տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ) կազմել է 13.6%՝ հունվարի համեմատ արագանալով 2.9 տոկոսային կետով և 2.4 տոկոսային կետով բարձր լինելով նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից:

Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային, %



2024թ. հունվար-փետրվար ամիսների ՏԱՑ-ի աճը հիմնականում պայմանավորված է եղել առևտրի և արդյունաբերության աճով, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 10.3 և 6.3 տոկոսային կետ: Տնտեսական ակտիվության աճին դրական նպաստում են ունեցել նաև ծառայությունների և շինարարության ոլորտները՝ համապատասխանաբար 1.2 և 0.5 տոկոսային կետով:

Գծապատկեր 2. Տնտեսական ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները 2024թ. հունվար-փետրվարին, տոկոսային կետ



1.1. Արդյունաբերություն

Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը, %



Արդյունաբերության ոլորտում աճի տեմպը կտրուկ արագացել է՝ պայմանավորված ոսկերչական գործունեության աճով: Արդյունաբերության աճը 2024թ. փետրվարին կազմել է 36.4%՝ էականորեն արագանալով նախորդ ամիսների առանց այդ էլ բարձր աճերի համեմատ: Հունվար-փետրվարին արդյունաբերության աճը կազմել է 28.9%՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով 7.9 տոկոսային կետով:

Հունվար[1] ամսվա տվյալներով արդյունաբերության աճը հիմնականում պայմանավորված է եղել մշակող արդյունաբերության 38.5% աճով, որի նպաստումն ընդհանուր արդյունաբերության աճին կազմել է 21.6 տոկոսային կետ: Այս աճը առավելապես պայմանավորված է «ոսկերչական արտադրատեսակների արտադրություն» գործունեության տեսակի շուրջ 11.3 անգամ աճով, որի նպաստումը մշակող արդյունաբերության աճին (38.5%-ին) կազմել է 42.5 տոկոսային կետ: Ընդ որում, մշակող արդյունաբերության որոշ՝ ՀՀ տնտեսության համար էական ենթաճյուղեր շարունակում են անկում ապրել: Մասնավորապես, սննդամթերքի արտադրությունը գրանցել է 0.4% անկում, ծխախոտի արտադրությունը՝ 23.2%, հագուստի արտադրությունը՝ 14.6%, քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների արտադրությունը՝ 13.4%: Այսինքն՝ մշակող արդյունաբերության համեմատաբար կայուն և երկարաժամկետ գործունեության տեսակները նվազում են, իսկ կարճաժամկետ գործունեությունն էական աճ է գրանցում՝ վատթարացնելով արդյունաբերության կառուցվածքը:

«Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում» ոլորտում գրանցվել է 8.1% աճ՝ ընդհանուր արդյունաբերության աճին ունենալով 1.6 տոկոսային կետով դրական նպաստում, իսկ «ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում» ոլորտում՝ 7.0% աճ, որն արդյունաբերության աճին նպաստել է 0.1 տոկոսային կետով:

1.2. Շինարարություն

Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, %



[1] Արդյունաբերության փետրվար ամսվա տվյալները՝ ըստ ենթաոլորտների, դեռևս չեն հրապարակվել:

Շինարարության ոլորտը աճում է համեմատաբար ավելի կայուն տեմպով: 2024թ. փետրվարին շինարարության աճը կազմել է 11.7%՝ շուրջ 2.2 տոկոսային կետով արագանալով նախորդ ամսվա համեմատ: Շինարարության աճը հիմնականում պայմանավորված է հիպոթեքային վարկերի տոկոսավճարների գծով եկամտային հարկի վերադարձի ծրագրի հետ: Սակայն անշարժ գույքի շուկայում նկատվող պասիվությունը վերջին ամիսներին անդրադառնում է շինարարության աճի տեմպի ցուցանիշի վրա՝ հանգեցնելով նախորդ տարվա համեմատ ավելի ցածր աճերի արձանագրմանը:

1.3. Ծառայություններ

Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, %



Ծառայությունների ոլորտում աճի տեմպը զգալիորեն ավելի ցածր է նախորդ տարվա համեմատ: Ծառայությունների ոլորտում 2024թ. տարեսկզբին նկատվում է ակտիվության աճի տեմպի որոշակի արագացում նախորդ տարվա վերջին ամիսների համեմատ, սակայն աճի տեմպը մնում է բավական ցածր նախորդ տարվա սկզբի համեմատ (թեև պետք է նշել, որ նախորդ տարվա սկզբում առկա էր բազայի էֆեկտի ազդեցությունը): Փետրվարին ծառայությունների աճը կազմել է 6.0%, իսկ հունվար-փետրվարին՝ 5.2%:

Ծառայությունների ոլորտի աճը, ըստ հունվար ամսվա տվյալների[2], մեծամասամբ պայմանավորված է եղել ֆինանսական և ապահովագրական գործունեության ոլորտի 13.4% աճով, որի նպաստումը ոլորտի աճին կազմել է 3.7 տոկոսային կետ: Ծառայության մյուս ենթաոլորտները նույնպես աճել են և դրական նպաստում են ունեցել ոլորտի աճին, բացի տրանսպորտային ծառայություններից,

[2] Ծառայությունների ոլորտի՝ ըստ ենթաոլորտների, փետրվար ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

որոնք նվազել են 17.7%-ով՝ ընդհանուր ծառայությունների աճին հակազդելով 2.3 տոկոսային կետով:

1.4. Առևտուր

Գծապատկեր 6. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, %



Առևտրի աճի տեմպը արագացել է: Առևտրի ոլորտում փետրվարին գրանցվել է բարձր աճ՝ շուրջ 28.3%՝ հունվարի համեմատ արագանալով 9.0 տոկոսային կետով: Հունվար-փետրվար ամիսների կուտակային աճը կազմել է 24.1%: Առևտրի աճի բարձր տեմպի պահպանումը ևս պայմանավորված է ոսկերչական արտադրանքի վերաարտահանման գործընթացով, ինչի մասին են վկայում առևտրի կառուցվածքի ցուցանիշները, մասնավորապես այն, որ առևտրի աճը հիմնականում պայմանավորված է մեծածախ առևտրի աճով, որը հունվարին[3] կազմել է 32%, այն դեպքում, երբ մանրածախ առևտրի աճը եղել է 4.1%:

[3] Առևտրի ոլորտի փետրվարի ցուցանիշները՝ ըստ ենթաոլորտների, դեռևս չեն հրապարակվել:

2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

Գծապատկեր 7. Արտահանման կուտակային աճը, %



Արտահանման ծավալն ավելի քան կրկնապատկվել է հունվար-փետրվար ամիսներին նախորդ տարվա համեմատ: 2024թ. փետրվարին արտահանման աճը կազմել է 191.3% (2.9 անգամ), իսկ հունվար-փետրվարի կուտակային աճը՝ 155.1% (2.6 անգամ): Այս ցուցանիշները պայմանավորված են ոսկու արտահանմամբ և ցույց են տալիս, թե ՀՀ տնտեսության համար որքան նշանակալի է այդ գործընթացը:

2024թ. հունվար ամսվա[4] ընթացքում «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի արտահանման ծավալը, որտեղ ներառված են նաև ոսկերչական իրերը, կազմել է 587 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա հունվարի համեմատ աճելով շուրջ 9 անգամ: Համեմատության համար նշենք, որ նախորդ տարվա հունվարի ընդհանուր արտահանումը կազմել էր 449.4 մլն ԱՄՆ դոլար, այսինքն՝ միայն վերոհիշյալ ապրանքախմբի արտահանման ծավալը գերազանցել է նախորդ տարվա նույն ամսվա ողջ արտահանման ծավալին:

Մյուս ապրանքախմբերի շարքում էական աճ է գրանցվել «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» ապրանքախմբի արտահանման ծավալների գծով՝ կազմելով շուրջ 89.2% և ընդհանուր արտահանմանը նպաստելով 13.7 տոկոսային կետով:

Արտահանման կառուցվածքում մտահոգիչ երևույթները շարունակում են պահպանվել: Մասնավորապես, հունվարին էական անկումներ են գրանցվել «ոչ

[4] Արտաքին առևտրի՝ ըստ ապրանքատեսակների, փետրվար ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր», «պատրաստի սննդի արտադրանք» և «կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք» ապրանքախմբերի արտահանման ծավալներում՝ համապատասխանաբար 56.8%, 21.7% և 32.2%: Անկում է գրանցվել նաև հանքահումքային ապրանքների արտահանման գծով՝ շուրջ 19.3%-ով:

Գծապատկեր 8. Ներմուծման կուտակային աճը, %



Ներմուծման աճի տեմպը նույնպես արագացել է: Ներմուծման ծավալների աճի արագացման տեմպը նույնպես պայմանավորված է վերը նշված ոսկերչական արտադրանքների ներմուծման և արտահանման երևույթով: 2024թ. փետրվարին ներմուծման աճը կազմել է 79.9%՝ շուրջ 14.2 տոկոսային կետով արագանալով նախորդ ամսվա համեմատ: Հունվար-փետրվարին ներմուծման աճը կազմել է 73.2%:

2024թ. հունվարի[5] տվյալներով «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի ներմուծման ծավալը կազմել է 509.3 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա հունվարի համեմատ աճելով 8.5 անգամ: Միայն այս ապրանքախումբն ապահովել է հունվարի ներմուծման աճի շուրջ 59.9 տոկոսային կետը: Ինչպես արտահանման դեպքում, ներմուծմանը ևս էական դրական նպաստում է ունեցել «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» ապրանքախմբի ներմուծումը, որն աճել է 47.5%-ով՝ ընդհանուր ներմուծման աճին նպաստելով 10.6 տոկոսային կետով:

[5] Արտաքին առևտրի՝ ըստ ապրանքատեսակների, փետրվար ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ

Անվանական աշխատավարձի աճի տեմպը դանդաղել է 2024թ.: Միջին ամսական անվանական աշխատավարձն ընդհանուր տնտեսությունում 2024 թվականի հունվարին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է 7.1%-ով՝ կազմելով 266,990 դրամ: Ոչ պետական հատվածում միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 6.0%-ով՝ կազմելով 291,429 դրամ: Ի տարբերություն նախորդ տարվա՝ պետական հատվածում միջին աշխատավարձը աճել է ավելի բարձր տեմպով՝ 9.8%-ով՝ կազմելով 208,071 դրամ: Սակայն, հաշվի առնելով, որ գնաճը հունվարին բացասական է եղել, իրական աշխատավարձերի աճն ավելի բարձր է:

Գծապատկեր 9. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը 2023-2024թթ. հունվարին, %



4. ՓՈԽԱՐԺԵՔ

Գծապատկեր 10. Անվանական փոխարժեքի միտումները, կուտակային աճը (%, աճը նշանակում է ՀՀ դրամի արժևորում) և միջին ամսական անվանական փոխարժեքը (դրամ)



2024թ. հունվար-փետրվար ամիսներին ՀՀ դրամի փոխարժեքը համեմատաբար կայուն է եղել՝ մնալով ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ արժեզրկված, իսկ ՌԴ ռուբլու նկատմամբ՝ արժևորված: Դրամի միջին փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ փետրվարին կազմել է 404 դրամ, իսկ հունվար-փետրվար ամիսներին միջինը կազմել է 405 դրամ՝ նախորդ տարվա հունվար-փետրվարի համեմատ արժեզրկվելով 2.5%-ով: Եվրոյի նկատմամբ արժեզրկումը նույն ժամանակահատվածում կազմել է 3.3%: ՌԴ ռուբլու նկատմամբ,

ՀՀ դրամի արժևորման տեմպի արագացումը սկսվել էր դեռևս նախորդ տարվա կեսից, սակայն ընթացիկ տարվա սկզբում որոշակիորեն կայունացել է՝ հունվար-փետրվար ամիսներին կազմելով 23.8%:

5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ

5.1. Բյուջեի եկամուտները

Պետական բյուջեի եկամուտների աճը տարեսկզբից ցածր մակարդակում է: Պետական բյուջեի ընդհանուր եկամուտները 2024թ. հունվար-փետրվարին կազմել են 324 մլրդ դրամ՝ աճելով 7.9%-ով: Հարկային եկամուտների աճը նույնպես կազմել է 7.9%: Սակայն պետք է նշել, որ 2024թ. եկամուտներում ներառված են նաև հիպոթեքային վարկերի տոկոսավճարների գծով եկամտային հարկի վերադարձի գումարները, մինչդեռ 2023թ. ցուցանիշներում դրանք ներառված չեն: Հետևաբար, անհրաժեշտ է 2023թ. նույնպես ճշգրտել, որպեսզի համեմատվող ցուցանիշները համադրելի դառնան: Նշված գործողությունն անելուց հետո եկամուտների աճը դառնում է 3.9%, իսկ հարկային եկամուտների աճը՝ 3.7%:

Ոչ հարկային եկամուտների և պաշտոնական դրամաշնորհների գծով գրանցվել են համապատասխանաբար 7.5% և 72.4% աճեր: Վերջինիս մեծ աճը զուգահեռաբար ունի բավական փոքր ծավալ (հունվար-փետրվարին կազմել է 0.4 մլրդ դրամ):

Գծապատկեր 11. Հարկային եկամուտների կուտակային աճը[6], %



Հարկային եկամուտների աճը 2024թ. հունվար-փետրվարին պայմանավորված է գրեթե բոլոր հարկատեսակների աճերով: Առավել մեծ նպաստումներ ունեն «Եկամտային հարկը» (աճը՝ 6.0%) և «Սոցիալական

[6] Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն:

վճարումները» (աճը՝ 23.1%), սակայն եթե հիպոթեքի գծով վերադարձները գումարենք 2023թ. ցուցանիշին (այդպիսով դարձնելով համադրելի), ապա եկամտային հարկի գծով մուտքերի աճը կդառնա բացասական և կկազմի -6.2%: Բարձր աճեր են գրանցվել նաև պետական տուրքի և մաքսատուրքերի գծով՝ համապատասխանաբար 22.6% և 18.5%:

Աղյուսակ 1. Հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ եկամտատեսակների

	2023թ. Հունվար-փետրվար		2024թ. Հունվար-փետրվար	
	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ
Ընդամենը հարկային եկամուտներ և պետական տուրք	**12.7**	**12.7**	**7.9**	**7.9**
Ավելացված արժեքի հարկ	8.2	3.2	1.4	0.5
Ակցիզային հարկ	12.9	1.0	7.7	0.6
Շահութահարկ	65.7	2.0	1.0	0.0
Պետական տուրք	-54.2	-3.3	22.6	0.6
Մաքսատուրք	-21.1	-1.0	18.5	0.6
Բնապահպանական և բնօգտագործման վճարներ[7]	-	1.6	-	1.5
Այլ հարկեր	36.2	1.2	9.4	0.4
Շրջանառության հարկ	32.9	1.2	17.0	0.7
Եկամտային հարկ	16.4	4.9	6.0	1.9
Սոցիալական վճարումներ	47.8	1.8	23.1	1.2

[7] Բնապահպանական և բնօգտագործման վճարների գծով մուտքերը նախորդ տարվա հունվար-փետրվարին եղել են բացասական՝ -0.9 մլրդ դրամ (հիմնականում վերադարձների աճի հետևանքով), ինչի պատճառով, աճի տեմպը հաշվել հնարավոր չէ:

5.2. Բյուջեի ծախսերը

Գծապատկեր 12. Պետական բյուջեի ծախսերը և դրա բաղադրիչները, մլրդ դրամ



Պետական բյուջեի ծախսերը, ի տարբերություն եկամուտների, աճել են բավական բարձր տեմպով: Ընդհանուր ծախսերը 2024թ. հունվար-փետրվար ամիսներին կազմել են 320.7 մլրդ դրամ՝ աճելով 30.4%-ով: Ընթացիկ ծախսերի աճը կազմել է 20.5%՝ ընդհանուր ծախսերի աճին նպաստելով 19.7 տոկոսային կետով: Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների գծով ծախսերը աճել են բավական բարձր տեմպով՝ շուրջ 3.8 անգամ՝ հիմնականում ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի (կապիտալ ծախսերի) հաշվին: Ընդ որում, կապիտալ ծախսերի աճը կտրուկ արագացել է փետրվարին, երբ իրականացվել է շուրջ 36.7 մլրդ դրամի չափով կապիտալ ծախս՝ ի տարբերություն նախորդ տարվա փետրվարի 8.0 մլրդ դրամի: Վերջինս հուշում է, որ հավանաբար ծախսերն ուղղվել են պաշտպանության ոլորտին:

5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը

Գծապատկեր 13. Պետական բյուջեի հավելուրդը (պակասուրդը (-), մլրդ դրամ



Փետրվարին պետական բյուջեի հավելուրդը բավական նվազել է, սակայն մնացել է դրական տիրույթում: 2024թ. փետրվարին, բյուջեի ծախսերը էականորեն գերազանցել են եկամուտները, ինչի արդյունքում հունվարից կուտակված հավելուրդը զգալիորեն նվազել է՝ հասնելով 3.8 մլրդ դրամի: Համեմատության համար նշենք, որ նախորդ տարվա հունվար-փետրվար ամիսների հավելուրդը կազմում էր 54.5 մլրդ դրամ:

5.4. Պետական պարտք

2024թ. փետրվարին ՀՀ պետական պարտքի ծավալը (արտահայտված ԱՄՆ դոլարով) նախորդ տարվա փետրվարի համեմատ աճել է 11.0%-ով՝ կազմելով 11.9 մլրդ ԱՄՆ դոլար: Կառավարության պարտքը աճել է 11.8%-ով՝ կազմելով 11.4 մլրդ ԱՄՆ դոլար, որի կազմում ներքին պարտքը (արտահայտված ՀՀ դրամով) աճել է 30.2%-ով, իսկ արտաքին պարտքը (արտահայտված ԱՄՆ դոլարով)՝ 1.6%-ով: Արտաքին պարտքի ծավալը 2023թ. դեկտեմբերի համեմատ, սակայն, փոքր-ինչ նվազել է՝ 0.8%-ով:

2024թ. փետրվարին պետական պարտատոմսերի տոկոսադրույքները նվազել են: Պետական կարճաժամկետ պարտատոմսերի միջին տոկոսադրույքը (եկամտաբերությունը) 2024թ. փետրվարին կազմել է 10.0%՝ նախորդ ամսվա համեմատ նվազելով 0.6 տոկոսային կետով, իսկ նախորդ տարվա փետրվարի համեմատ՝ 1.5 տոկոսային կետով: Միջնաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունը նույնպես նվազել է՝ կազմելով 10.3% և նախորդ տարվա փետրվարի համեմատ նվազելով 1.7 տոկոսային կետով:

Գծապատկեր 14. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով) 12-ամսյա աճը, %



6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

6.1. Գնաճ

Գծապատկեր 15. 12-ամսյա գնաճ, %



Գնաճը շարունակում է մնալ բացասական տիրույթում: 2024թ. սկսվել է գների անկմամբ, ինչը խորացել է փետրվարին՝ կազմելով -1.7%: Արձագանքելով գնանկումային միջավայրին՝ ՀՀ կենտրոնական բանկը շարունակում է նվազեցնել քաղաքականության տոկոսադրույքը: Վերջին նվազեցումը տեղի է ունեցել ս.թ. մարտին՝ 0.25 տոկոսային կետով, ինչի արդյունքում վերաֆինանսավորման տոկոսադրույքը հասել է 8.5%-ի՝ նախորդ տարվա մարտի 10.75%-ի դիմաց:

6.2. Ավանդներ

Գծապատկեր 16. Ավանդների 12-ամսյա աճը, %



Ավանդների ծավալն աճել է նախորդ տարվա համեմատ, սակայն դեկտեմբերի համեմատ մնացել է գրեթե նույն մակարդակում: Ընդհանուր ավանդների աճը 2024թ. փետրվարին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ կազմել է 12.2%, սակայն 2023թ. դեկտեմբերի համեմատ ավանդների ծավալը մնացել է գրեթե նույն մակարդակում: Նախորդ տարվա համեմատ ավանդների ծավալի աճը հիմնականում պայմանավորված է եղել ռեզիդենտներից ներգրավված ավանդների շուրջ 15.2% աճով, իսկ ոչ ռեզիդենտների ավանդների աճի տեմպը ավելի ցածր է եղել՝ կազմելով 3.7%:

Գծապատկեր 17. Տնտեսության հատվածների նպաստումներն ավանդների աճին, տոկոսային կետ



Ավանդների աճին 2024թ. փետրվարին առավելապես նպաստել է տնային տնտեսություններից ներգրավված ավանդների աճը՝ շուրջ 7.5 տոկոսային կետով: Ոչ ռեզիդենտներից և տնտեսության այլ հատվածներից ներգրավված ավանդները նույնպես աճել են՝ ընդհանուր ավանդներին ունենալով դրական նպաստում:

6.3. Վարկեր

Վարկերի աճի տեմպը բավական բարձր է: 2024թ. փետրվարին ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերի (արտարժույթով և ՀՀ դրամով) ծավալը նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է 21.9%-ով: Վարկերի աճը դրական է նաև նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ, սակայն ավելի ցածր տեմպով (փետրվարի աճը կազմել է 1.2%):

Գծապատկեր 18. Վարկերի 12-ամսյա աճերն ըստ վարկառուների ռեզիդենտության, %





Վարկերի աճը տեղի է ունեցել ինչպես ռեզիդենտներին, այնպես էլ ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի հաշվին, որոնց աճերը կազմել են համապատասխանաբար 21.7% և 26.5%, իսկ նպաստումները՝ 20.6 և 1.3 տոկոսային կետ:

Գծապատկեր 19. Ռեզիդենտներին տրված վարկերի 12-ամսյա աճը, %



Ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալների աճը պայմանավորված է ինչպես իրավաբանական անձանց, այնպես էլ տնային տնտեսություններին տրամադրված վարկերի աճով, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 11.4 և 10.3 տոկոսային կետ:

Գծապատկեր 20. Տնտեսության ճյուղերի նպաստումները ռեզիդենտներին տրամադրված վարկերի աճին, տոկոսային կետ[8]



[8] Վարկերի վերաբերյալ վիճակագրական տվյալները ներկայացվում են ինչպես ոլորտային դասակարգմամբ, այնպես էլ ըստ ռեզիդենտության և տնտեսության հատվածների դասակարգման: Տարբեր դասակարգումներով ներկայացվող տվյալները տարբերվում են միմյանցից, ինչը բացատրվում է ՀՀ ԿԲ կողմից տեղեկատվության հավաքագրման տարբերություններով և չի մանրամասնվում:
2024թ. փետրվարի տվյալները դեռևս չեն հրապարակվել:

Ռեզիդենտների շարքում, ինչպես նախորդ տարվա վերջում, 2024թ. սկզբում նույնպես, բոլոր ուղղություններով առկա է դրական դինամիկա, բացի արդյունաբերության ոլորտից: Վարկերի աճին շարունակում են էական մեծ նպաստում ունենալ հիպոթեքային վարկերը, որոնց աճը կազմել է 25.4%, իսկ նպաստման չափը՝ 5.3 տոկոսային կետ: Էականորեն աճել են նաև սպառողական (աճը՝ 22.8%), ծառայությունների (աճը՝ 30.0%) և շինարարության (աճը՝ 46.0%) ոլորտներին տրամադրվող վարկերի ծավալները, որոնք ընդհանուր վարկերի աճին նպաստել են համապատասխանաբար 5.0, 4.9 և 3.8 տոկոսային կետով: Արդյունաբերությանն ուղղվող վարկերի ծավալները 2022 թվականից սկսած նվազում են, իսկ 2024թ. հունվարին դրանց նվազման չափը կազմել է 7.9%՝ պայմանավորված ինչպես մշակող արդյունաբերության, այնպես էլ հանքարդյունաբերության ոլորտներում վարկավորման ծավալների նվազմամբ:

6.4. Դրամական փոխանցումներ

Գծապատկեր 21. ՀՀ բանկերի միջոցով իրականացվող դրամական փոխանցումների զուտ ներհոսքը, մլն ԱՄՆ դոլար[9]



Արտերկրից դեպի ՀՀ փոխանցվող դրամական միջոցների զուտ ներհոսքը շարունակում է նվազել նաև 2024 թվականին: 2024թ. հունվարին դրամական միջոցների զուտ ներհոսքը կազմել է 32.8 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա հունվարի համեմատ նվազելով 80.7%-ով: Թեև դրամական փոխանցումների համախառն ներհոսքը նույնպես նվազել է 6.6%-ով, զուտ ներհոսքի նման կտրուկ անկումը հիմնականում պայմանավորված է արտահոսքի շուրջ 51.9%-ով աճով:

[9] Ներկայացված են ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից մուտք եղած և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր կատարված ընդամենը ամսական փոխանցումները և դրանց տարբերությունը՝ ԱՄՆ դոլարով:
2024թ. փետրվար ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

Հունվարին դրամական միջոցների արտահոսքը հիմնականում տեղի է ունեցել դեպի ԱՄԷ, ԱՄՆ, Շվեյցարիա, ՌԴ և Սինգապուր:

7. ԱՄՓՈՓՈՒՄ

1. 2024թ. փետրվարի տնտեսական ակտիվության աճը կտրուկ արագացել է, սակայն այն պայմանավորված է կարճաժամկետ գործոնով: Տնտեսական ակտիվության ցուցանիշը փետրվարին կազմել է 16.3%, որը, սակայն, առավելապես պայմանավորված է ոսկերչական գործունեության կտրուկ աճով: Սա վտանգավոր է, քանի որ այն ամբողջությամբ հիմնված է արտաքին գործոնների վրա, որոնք անկանխատեսելի են, միջավայրի հանկարծակի փոփոխությամբ պայմանավորված՝ հնարավոր է գործունեության ամբողջությամբ դադարեցում:

2. Արդյունաբերության բարձր աճին զուգահեռ, մշակող արդյունաբերության որոշ՝ ՀՀ տնտեսության համար էական ենթաճյուղեր շարունակում են անկում ապրել: Մասնավորապես, սննդամթերքի, ծխախոտի, հագուստի, քիմիական նյութերի և քիմիական արտադրության ենթաոլորտներում 2024թ. հունվարին անկում է գրանցվել: Ստացվում է, որ մշակող արդյունաբերության համեմատաբար կայուն և երկարաժամկետ գործունեության տեսակները նվազում են, իսկ կարճաժամկետ գործունեությունն էական աճ է գրանցում՝ վատթարացնելով արդյունաբերության կառուցվածքը:

3. Արտահանման ծավալները ավելի քան կրկնապատկվել են՝ պայմանավորված ոսկերչական գործունեության աճով: Իհարկե, արտահանման ծավալի աճն առնվազն դրական է այն առումով, որ դեպի ներքին տնտեսություն արտարժույթի ներհոսք է տեղի ունենում, սակայն հաշվի առնելով, որ այս դեպքում գործ ունենք միաժամանակ գրեթե նույն չափով ներմուծման հետ, ապա այդ դրական էֆեկտը զգալիորեն չեզոքանում է: Առավել խնդրահարույց է այն, որ բարձր աճերի ֆոնին ստվերվում է արտահանման գծով առկա խնդիրները, մասնավորապես՝ մի շարք ապրանքատեսակների արտահանման ծավալների անկումները: Հունվարին էականորեն նվազել են, մասնավորապես, «պատրաստի սննդի արտադրանք» և «կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք» ապրանքախմբերի արտահանման ծավալները, խնդրահարույց է նաև հանքահումքային ապրանքների արտահանման էական անկումը:

4. Տնտեսական աճի արագացման պայմաններում հարկային եկամուտներն աճում են բավական դանդաղ տեմպով: 2024թ. հունվար-փետրվարին հարկային եկամուտների աճը կազմել է 7.9%, իսկ համադրելիության բերելու (եկամտային հարկի վերադարձի ցուցանիշը՝ 2023թ. ցուցանիշներում ներառելու) դեպքում աճը կազմում է 3.7%: Բնականաբար սա մտահոգիչ է՝ հաշվի առնելով ծախսերի ավելի քան 30% աճը, ինչպես նաև կառավարության քաղաքականության թիրախները

հարկեր/ՀՆԱ հարաբերակցության բարձրացման ուղղությամբ: Այս առումով, կառավարությունը պետք է ակտիվ ջանքեր ձեռնարկի վերը նկարագրված ոսկերչական գործունեությունը հարկելու համար, ինչը մի կողմից կկարգավորի գործունեության այդ տեսակի աճի տեմպը, մյուս կողմից կնպաստի հարկային եկամուտների ավելացմանը:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: